«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՆՈՒՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶ՝ ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «ԽՈՐՈՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ներածություն

Հայտնի է,որ ճակատագրի բերումով աշխարհաբարի ձևավորման ժամանակ գրական լեզուն ներկայացավ երկփեղկված ՝ գրական արևելահայերեն և գրական արևմտահայերեն վիճակներով :Արևմտահայերենի և արևելահայերենի անգամ թռուցիկ զուգադրությունը ակնբախ է դարձնում նրանց միջև եղած շփման կետերի ոչ թե նվազեցումը ,այլ ընդհակառակը՝աճը:Հարկ է նշել,որ 20-րդ դարի կեսերից սկսած երկու գրական լեզուներում նկատելի է դարձել արևմտահայերենի ազդեցությունը արևելահայերենի վրա և՝հակառակը:

Հայաստանում համակողմանի քննության են ենթարկվել արևելահայերենի բառային քերականությունը,իսկ արևմտահայերենը հասկանալի պատճառներով անտեսվել է:Արևմտահայերենի քննությունը կատարվել հիմնականում Սփյուռքում ,սակայն վերջին ժամանակներս Հայաստանում արևմտահայերենի քննությունը արժանացավ ուշադրության:Մեր աշխատության նպատակը արևելահայերենի և արևմտահայերենի դարձվածքների տարբերությունների և ընդհանրությունների ուսումնասիրությունն է:Սակայն մինչ մեր աշխատանքի բուն խնդրին անցնելը, խոսենք այն մասին,թե ինչ է դարձվածաբանությունը և դարձվածքը՝ մասնավորապես:Դարձվածքների որպես լեզվի ինքնուրույն իմաստային միավորների ուսումնասիրությունը լեզվաբանության մեջ ուշադրության է արժանացել 30-ական թվականներից ՝սկսած Մ.Աբեղյանից: Լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա ոչ դարձվածքների տարբերակման ,ոչ էլ դարձվածքների սահմանման հարցում:Ըստ լեզվաբան Լևոն Եզեկյանի՝դարձվածքները առօրյա,ժողովրդախոսակցական ոճին բնորոշ միավորներ են,որոնք յուրաքանչյուր ժողովրդի ազգային մտածողությունը դրսևորող միջոցներ են ,որոնց շնորհիվ արտահայտվում են տվյալ ժողովրդի բարքերն ու սովորույթները ,կենցաղն ու ապրելակերպը ,ինչպես նաև բնորոշ կենսափիլիսոփայությունը:Լեզվաբանը դարձվածքի կարևոր հատկանիշներից մեկը համարում է փոխաբերական –այլաբանական իմաստը ,և եթե դարձվածքը չունի փոխաբերական իմաստ ,ապա այն սովորական ,ազատ, ոչ կայուն բառակապակցություն է:

Դարձվածքները, ունենալով շատ հին ծագում ,նաև արդիական նշանակություն, գալիս են դարերի խորքից ,ստեղծվում են մեր ՝ իրադարձություններով անչափ հարուստ օրերում և այժմ էլ ամենից լավ համապատասխանում են մեր ժամանակի սրընթաց ոգուն:

Դարձվածքը և նրա արտահայտությունները

1.1Դարձվածքների առաջացման աղբյուրները

Ինչպես արդեն գիտենք,դարձվածքը լեզվի արտահայտչական կարևորագույն միջոց է, լեզվական ոճավորման անհրաժեշտ տարր:

Կան որոշ դարձվածքներ ,որոնց առաջացման մոտավոր ժամանակը կարելի է որոշել ,քանի որ դրանք կապված են պատմական այս կամ այն ժամանակաշրջանի ,անձի կամ դեպքի հետ:Արևելահայերեն օրինակ `Արա գեղեցիկ-գեղեցիկ տղամարդ /ըստ հունական դիցաբանության Արամի որդին,հայոց նահապետը ,որն իր գեղեցկության համար կրում էր գեղեցիկ մակդիրը/:

Այս ամենը պարզելուց հետո հարց է առաջանում,թե ինչպես են առաջանում դարձվածքները:Վերջինիս առաջացման ընթացքը ցույց տալու համար պետք է նշել հետևյալ երեք աստիճանները՝

1.Տվյալ կապակցության առաջին կիրառությունը վերաիմաստավորված:Ամենից դժվարը դարձվածքը հենց այս աստիճանում գտնելն է:Դարձվածքների գոյացումը նման է ժողովրդական բանահյուսության ստեղծմանը,այսինքն՝ծագումով անհատական են,մշակումով `հավաքական :Այս աստիճանին բնորոշ է ազատ կապակցության փոխադրումը իր համար սովորական իմաստային դաշտից նոր,փոխաբերական դաշտ:Արևմտահայերեն օրինակ՝ճիտին պարտքը,նշանակում է հոգու պարտք:/Գրիգոր Զոհրապի ստեղծագործության վերնագրից:

2.Այս ամենից հետո սկսվում է երկրորդ աստիճանը,որի ժամանակ ամրապնդվում է պատրաստի վերարտադրելիության հատկությունը,դարձվածքի նոր իմաստը ընդհանուր ճանաչում է գտնում ,և այն մտնում է ընդհանուր լեզվի ոլորտ:

3.Հետո տեղի է ունենում դարձվածքի բաղադրիչների մաքրում ,այսինքն՝դարձվածքի որևէ բաղադրիչ կամ մի քանի բաղադրիչներ կարող են ունենալ մի քանի հոմանիշներ ,որոնք գործածության ոլորտում պայքար են մղում ,որի ընթացքում հաղթում է այն բառը,որը դարձվածքից դուրս ևս կենսունակ է:Օրինակ՝բալզակյան հասակ կամ տարիք ,այսինքն՝կանանց 35-40տարիքի շրջանը,երբ շատերի մոտ սկսում է երկրորդ երիտասարդությունը,բայց ավելի նախընտրելի է բալզակյան հասակ տարբերակը:

Երեք տարբերակները նշելուց հետո պետք է ասել,որ ոչ բոլոր դարձվածքներն են այդ ճանապարհով անցել,քանի որ պատճենված դարձվածքները մեր լեզվի մեջ մտել են պատրաստի ձևով:Հայերենում գոյություն ունեն ռուսերենի դարձվածքների պատճենաման հետևանքով առաջացած դարձվածքներ:Օրինակ՝голуб мира – խաղաղության աղավնի:

Արևմտահայերեն օրինակ՝լուրջի առնել –принять всерез

Դարձվածքների մեջ շատ կարևոր է նմանականության հարցը:

Արևելահայերեն օրինակներ `աչքում մազ բուսնել –1.շատ չարչարվել ,2.երկար սպասելուց հոգնել և բերանում մազ բուսնել –հաճախակի միևնույն բանն ասել:

Արևմտահայերեն օրինակներ `բերնին չափը առնել-1.արժանի պատասխան ստանալ ,2.խոսքի մեջ պարտվել և բերնին չափը տալ- 1.արժանի պատասխան տալ:

Դարձվածքներ են ստեղծվում նաև հակադարձ նմանականության օրենքով:

Արևելահայերեն օրինակներ`բերանը բացել-բերանը փակել:

Արևմտահայերեն օրինակներ`գրպանի ընկեր –նույն գրպանից ծախսող,գրպանի թշնամի –վատնող:

Այսպիսով՝ դարձվածքը բառերի կայուն ,պատրաստի վերարտադրելի կապակցություն է,ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է,շարահյուսական կապը՝ մթագնած:

Դարձվածքների կառուցվածքային տիպերը ըստ հիմնական բաղադրիչի

Սովորաբար դարձվածքի բաղադրիչները հավասար դեր չեն կատարում ,քանի որ դրանց մի մասը դարձվածքի հիմնական իմաստը կրողներն են,իսկ մյուսները միջոց են դառնում իմաստի արտահայտման համար :Առաջիններն էլ ընդունված է համարել հիմնական բաղադրիչ:

Ըստ հիմնական բաղադրիչի խոսքիմասային պատկանելիության տարբերակում ենք `1.բայական դարձվածքներ

2.գոյականական դարձվածքներ

3.ածականական դարձվածքներ

4.մակբայական դարձվածքներ

Ըստ Գ.Ջահուկյանի,Է.Աղայանի `պետք է նկատի ունենալ,որ դարձվածքի հիմնական բաղադրիչը և ամբողջ դարձվածքը խոսքի մասային պատկանելությամբ կարող են համընկնել կամ տարբերվել ,այսինքն՝ օր.բայով կազմված դարձվածքը կարող է ոչ միայն բայական արժեքով հանդես գալ ,այլև ածականական, կամ գոյականով կազմված դարձվածքը կարող է գոյականի, ինչպես նաև ածականի արժեք ունենալ:

Բայական դարձվածքներ

Բայական կապակցություն ներկայացնող դարձվածքները ամենից շատն են :Դրանք բայական արժեք ու նշանակություն ունեցող դարձվածային արտահայտություններն են:

Հարկ է ավելացնել ,որ բայական արտահայտությունները ոչ միայն հոմանիշ են,այլև համարժեք են առանձին ամբողջական բայերին և կարող են ստանալ վերջիններիս հատուկ քերականական ձևավորում կամ փոփոխություն ՝ արտահայտելով իմաստային որոշ նրբերանգներ:Բայական դարձվածքների մեծ մասը կազմված է երկու բաղադրիչից՝

Արևմատահայերեն օրինակ՝գործը գոցել-դադարեցնել գործը,լեզու ելլալ –խոսել սկսել

Արևելահայերեն օրինակներ՝բերանը բանալ-խոսել,2.ապշահար նայել,գլխին նստեցնել-մեկին բեռ դարձնել:

Բայական դարձվածքները երբեմն կարող են կազմված լինել երեքից ավել բաղադրիչից:Արևելահայերեն օրինակ՝մեկի դռանը շուն լինել-նկատի առնել,հասկանալ,

Արևմտայահերեն օրինակ՝շապիկի փեշը գլխուն քաշել-որդեգրել,շաքար դնել կաթին մեջ –խաբելու համար շողոքորթել:

Բայական դարձվածքների բաղադրիչ կարող են լինել գոյականները՝արևմ.օրինակ՝կռնակ ունենալ-օգնող ունենալ,մազերը կանգնիլ-զարհուրել,արևել.օրինակ ՝մոխիր դառնալ-վառվել,սով ընկնել-սով տարածվել,դերանունները՝իրար տանել-միմյանց հանդուրժել,իրար ուտել-իրար հետ գժտվել,արևմտ.օրինակ՝իրարու ձգել-գժտեցնել,իրեն քաշել-հարպուրել,ինքնիրմեէ ելլել համբերությունից դուրս գալ:

Իրենց իմաստային առումներով շատ հետաքրքիր են բայից և ածականից կազմված դարձվածքները:Արևելահայերեն օրինակ՝սևը տալ՝պատժել,կարճ կապել-ասելիքը համառոտել,կարմիրը կապել-տղային ամուսնացնել:

Արևմտահայերեն օրինակ՝պզտիկ թողուլ-ամոթով թողնել,պաղ առնել-մրսել:

Կան նաև այնպիսի բայական դարձվածքներ ,որոնք կազմված են առանձին անգործածական բառերից;Որպես առանձին անգործածածկան բառեր հանդես են գալիս ետադրությունները , որոշ մակբայներ, արևել.օրինակ՝առաջը գալ-երևալ,դեմ առնել-համառել,արգելել,վրան դառնել-օգնել,ետ գցել-տնտեսել,ներս գցել-թաքցնել:

Արևմտ.օրինակ՝առաջք առնել-սկիզբ առնել,առաջքը առնել-կանխել,վրան առնել-իրեն վերագրել ասվածը ,դուրս ձգել- վտարել,ներսը բանալ-սիրտը բացել:

Նշենք նաև ,որ կան դարձվածքներ,որոնք կազմված են միայն բայի ժխտական ձևերով ՝արևել.օրինակ՝ աչքով աչք չունենալ-չսիրել,աչքը բացել-փակելու ժամանկ չունենալ-խիստ զբաղված լինել:

Արևմտ.օրինակ՝դեռ սև շունի չէ հանդիպած-դեռ անփորձ է:

Անվանական կապակցություններ

Անվանական բայական դարձվածքների մեջ մտնում են հետևյալ դարձվածքները ՝

1.գոյականական

2.ածականական

Գոյականական դարձվածքների զգալի մասը կազմվում գոյականական լրացում-լրացյալ բառակապակցություններից:Ընդ որում գայականական լրացումը կարող է դրվել ոչ միայն ուղիղ ,այլև թեք հոլովներով:Օրինակ՝ծաղիկ հասակ – երիտասարդական տարիք,ծով աչքեր-մեծ աչքեր,ագռավի ճանկեր-տգեղ ձեռագիր,արյան կանչ-ցեղակցության զգացողություն:Արևմտահայերեն օրինակ՝ոսկի ծաղիկ-արևածաղիկ,գոլոմպոսի ձու-դժվարին գործ,ճակատի կնճիռ-մտահոգություն:

Գոյականական դարձվածքներ են կազմվում նաև ածական կամ թվական լրացում + գոյական լրացյալով:օրինակ՝ճերմակ քամի-հանգիստ,մեղմ աննշան,ահեղ ,երրորդ աչք-խիստ նայվածք,դատաստան-վերջնական պատիժ,արևմտ.օրինակ՝առջի գիշեր-առագաստի առաջին գիշերը,անոյշ աչք-սիրելի նայվածք:

Կան նաև գոյականական կիրառություն ունեցող որոշ դերբայական ձևերով արտահայտված դարձվածքներ՝աղոթած էշ-չափից դուրս խելոք,անճարակ մարդ,աղվես նալող-խաբեբա,արևմտ.օրինակ՝ շուն խաղցնող-խեղկատակ:

Ածականական դարձվածքների հիմնական մասը ածականն է,և ամբողջ մասը ունենում է ածականի խոսքիմասային արժեք:Արևելահայերեն օրինակ՝երեսը փափուկ-բնավորության մեջ ընդառաջող,երեսը պինդ-անամոթ,լեզուն երկար-մեծախոս:Արևմտահայերեն օրինակ՝ձեռքը գոց՝ժլատ,ձեռքը տաք –ունևոր:

Ածականական դարձվածքներ են կազմվում նաև գոյականի սեռական հոլովով և մեկ այլ գոյականի ուղղական հոլովով:Արևմտահայերեն օրինակ՝Աստծու գառ-խելոք,ջրի գին-շատ էժ,արևմտահայերեն օրինակ՝սատանայի եղունգ-չարաճճի :

Կան որոշ ածականական դարձվածքներ ,որոնք կազմված են ածական+գայական կաղապարով:Արևելահայերեն օրինակ՝թեթև ձեռք-հաջողակ մարդ,բաց ճակատ-ազնիվ:Արևմտահայերեն օրինակ՝պաղ ապուր-1.անհամակրելի,2սառնարյուն,պարապ աշխատանք-անօգուտ:

Մակբայական կապակցություններ

Մակբայի արժեք ունեցող դաձվածքները բազմազան կառուցվածք ունեն :Շատ են տարածված գոյականի թեք ձևերով լրացում ունեցողները,և կապով ու նրա խնդրով կազմվածները

Տարբերվում են `

1.մակբայական դարձվածքներ ,որոնց գոյական բաղադրիչը արտահայտված է տրական հոլովով: Արևելահայերեն օրինակ՝զենքը ձեռքին-զինված ,աչքը ճամփին –սպասողական վիճակում:

2.մակբայական դարձվածքներ ,որոնց գոյական բաղադրիչը արտահայտված է հայցական հոլովով:Արևելահայերեն օրինկակ՝երկու քայլ –շատ մոտիկ տարածության վրա,հազար բերան-բազմիցս:

3.մակբայական դարձվածքներ ,որոնց գոյական բաղադրիչը արտահայտված է գործիական հոլովով;

Արևելահայերեն օրինակ՝աշխարհով մեկ-ամենուրեք,ծտի թևով –շատ արագ:

Արևմտահայերեն օրինակ՝աչօք-բացօք-բաց աչքով:

Բացի վերոնշյալ դարձվածքներից ,կան նաև կապերով և նրանց խնդիրներով կազմված մակբայներ: Օրինակ՝առ հարկի-հարկադրաբար,ձեռքի տակէն-ծածուկ:

Դարձվածքների դասակարգումը ըստ իմաստային միաձուլության աստիճանի

Ըստ իմաստային միաձուլության աստիճանի ՝ դարձվածքները լինում են՝

1.դարձվածային սերտաճում

2.դարձվածային միասնություն

3.դարձվածային կապակցություն

4.դարձվածային արտահայտություն

Դարձվածային սերտաճում

Այս խմբի մեջ մտնում են այն դարձվածքները ,որոնց ընդհանուր իմաստը չի բխում դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից:

Դրանք իմաստային տեսակետից բառային անբաժանելի կապակցություններ են, որոնց մեջ բառերը կորցրել են իրենց բառային իմաստները ,վերաիմաստավորվել՝ դառնալով դարձվածքի ամբողջական իմաստի բաղադրատարր:

Դարաձվածային սերտաճման հիմնական հատկանիշը նրա բառային անբաժանելիությունն է ,բաղադրիչների իմաստային բացարձակ սերտաճումը:

Արևելահայերեն օրինակ՝ականջը կախել-լսել,աչքից գցել –ատել,փոթորիկ մի բաժակ ջրում –աննշան բանից մեծ աղմուկ:

Արևմտահայերեն օրինակ՝մեկ շապիկի մեջ քնանալ-մտերիմ ընկերներ լինել,շաքարի մեջ ապրիլ-փարթամ կյանք վարել,ջուրը պատէն վեր հանել-փորձել անկարելին:

Դարձվածային միասնություն

Դարձվածային միասնության մեջ մտնում են դարձվածաբանական այնպիսի միավորներ ,որոնք իմաստաբանորեն ևս ամբողջական են և անբաժան ,բայց ,ի տարբերություն դարձվածային սերտաճումների ,սրանց ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին փոխաբերական իմաստով :Արևելահայերեն օրինակ՝անլվա կատու-աներես,անհոտ ծաղիկ-ապաշնորհ մարդ,արյունը պաղ-անմարդամոտ:

Արևմտահայերեն օրինակ՝եթե պատը կը լսէն,ան ալ կը լսէ-ոչ ոքի խոսքը չի լսում,խելքը բոբիկ-անխելք,կոնակ դարձնել-խույս տալ,2.լքել:

Դարձվածային կապակցություն

Դարձվածային կապակցությունները իմաստաբանորեն տարրալուծվող դարձվածքներ են,որոնց դարձվածային ընդհանուր իմաստը բխում է դարձվածոը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստներից ։Դարձվածքը կազմող բառերը հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը,բայց իրենց կապերով մնում են կախյալ վիճակում.բաղադրիչներից մեկը հանդես է գալիս փոխաբերական իմաստով:

Արևելահայերն օրինակ՝գլուխը կախել –1.իր գործին մնալ,2.ամաչել,քիթը ջարդել-մեկին խիստ վախեցնել,հոնքերը կիտել-մռայլվել:

Արևմտահայերեն օրինակ՝կռնակը առնել-շալակել,մեկ աղբյուրէ ջուր խմել-համախմբվել:

Այս կարգի դարձվածքների մեջ բաղադրիչները կարող են փոխարինվել հոմանիշ բառերով ,օրինակ՝ հոնքերը կիտել /նոթերը կիտել,ձայնը փորը գցել/ձայնը փորը քաշել:

Դարձվածային արտահայտություն

Դարձվածային արտահայտություն են համարվում այն կայուն դարձվածաբանական միավորները ,որոնք իմաստային տեսակետից ոչ միայն բաժանելի են,այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բառերից ,և դարձվածքի ընդհանուր իմաստը բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի իմաստներից ,որը բառային կազմի հետ կայուն ։Արևելահայերեն օրինակ՝ալֆա և օմեգա-որևէ բանի սկիզբը և վերջը,արևմտ.օրինակ՝խնայողական սնդուկ-խնայդրամարկղ:

Դարձվածային արտահայտությունների մեջ մտնում են

1.գրական ծագում ունեցող թևավոր խոսքերը ,հեղինկային դիպուկ արտահայտությունները,որոնք խզել են իրենց կապը նախնական բնագրից,երևույթի հետ,որը հանդիսացել է առաջացման աղբյուր։օրինակ՝ավգյան ախոռ-բոլորովին լքված շինություն,արիստոֆանյան դիմակ՝կատակասեր մարդ /հունական դիցաբանությունից/:

2.հաղորդակցական բնույթի դարձվածային արտահայտություններ,արևելահայերեն օրինակ՝ ծուռ ակոսը եզից է-ասվում է այն դեպքում,երբ գործի հաջողության պատճառը գործի ավագն է,կարմիր կովը իր կաշին չի փոխի – մարդն իր բնավորությունը չի փոխի։Արևմտահայերեն օրինակ՝լայն օրդ նեղ ըրէ ,որ նեղ օրդ լայն ապրիս-խոհեմ, խնայող մարդը նեղության մեջ չի ընկնի:

Դարձվածքների ձևաիմաստային դասակարգումը

Դարձվածքների բազմիմաստություն

Բառերի նման դարձվածքներն էլ ունեն իրենց արտաքին `նյութական կողմը՝ձևը,և ներքին `բովանդակային կողմը:

Ինչպես բառիմաստը ,այնպես էլ դարձվածքի իմաստը այն հասկացություններն են, որոնք պատմության ընթացքում հասարակության կողմից ամրացվել են տվյալ բառին,բառակապակցությանը և ինչ-որ բան են նշանակել,-նշում է Խ.Բադիկյանը:

Սակայն ի տարբերություն բառի,որն ունի թե իսկական ,թե փոխաբերական իմաստ,դարձվածքը օժտված է միայն փոխաբերությամբ:

Բառերի նման դարձվածքները լինում են նույնիմաստ և բազմիմաստ:

Բազմիմաստ են կոչվում այն դարձվածքները,որոնց բաղադրիչները միասին այլբերական մեկից ավելի իմաստներ են արտահայտում:

Բազմիմաստության ժամանակ դարձվածքները ձևավորվում են միայն բովանդակության պլանում,այսինք՝արտահայտության պլանը մնում է նույնը:

Այս ամենից պարզ է դառնում,որ դարձվածքը ձեռք է բերում լեզվի ու նրա բառապաշարի ,մարդու մտածողության ,նրա երևակայության ու մտքի թռիչքի պատմական զարգացմամբ պայմանավորված իմաստային լայն ծավալ:

Բառերի նման դարձվածքները ևս իրենց ստեղծման ժամանակ եղել են մենիմաստ և հետո միայն ստացել իմաստներ:Մենիմաստ են կոչվում այն դարձվածքները ,որոնք այլաբերական միայն մեկ իմաստ են արտահայտում:Արելահայերեն օրինակ՝Ադամի արհեստ-հողագործություն ,բոլոր ծաղիկները քաղել:

Արևմատահայերեն օրինակ՝աչքը գոցել- չնկատելու տալ,աչքը լոռ- ցանկասեր:

Բազմիմաստ են կոչվում այն դարձվածքները ,որոնց բաղադրիչները միասին արտայատում են մեկից ավելի փոխաբերական իմաստներ:

Արևելահայերեն օրինակ՝ձախ գնալ-1.ապրանքը կամ որևէ բան ոչ մի իսկական նպատակին ծառայել.ստուգումներից պարզվեց ,որ ապրանքի կեսը ձախ է գնում:,2.ճիշտ ճանապարհից շեղվել.չարիք չէ արդյոք ,երբ օրինական ընտանիքում ամուսինը դավաճանում է կնոջը և ձախ է գնում:

Արևմտահայերեն օրինակ՝ձեռքէ ելլել-1.ձեռքից գնալ,2.հալվել ,կորչել:

Դարձվածքները ըստ ձևի և իմաստի դրսևորումների լինում են `

1.համանունային

2.հոմանշային

3.հականշային

4.տարբերակային

Համանունային դարձվածքներ

Դարձվածային բազմիմաստության հետ սերտորեն կապված է դարձվածային համանունությունը:

Ինչպես նշում է Խ.Բաղիկյանը ,համանուն դարձվածքները բազմիմաստ դարձվածքների համակարգում մի առանձին խումբ են կազմում ,որի ուսումնասիրումը շատ կարևոր է ու հետաքրքիր հատկապես ոճական առումով:

Ա.Մարգարյանի կարծիքով,համանուն դարձվածքները համանուն բառերի նման արտաքին կազմով նույնն են,բայց տարբեր իմաստներ են արտահայտում :

Համանուն դարձվածքների համար շատ կարևոր նշանակություն ունի խոսքային միջավայրը ,քանի որ միևնույն բառակապակցությունը խոսքային մի միջավայրում հանդես է գալիս իր իսկական նշանակությամբ ,իսկ մեկ այլ միջավայրում վերաիմաստավորվում է և ձեռք է բերում դարձվածային իմաստ:

Օրինակ՝ձեռքերը տաքացնել-1.սառած ձեռքերը տաքացնել,2.փոխաբերական իմաստը՝ շահել.Արամը մտավ աշխատանքի և միայն իրեն հայտնի միջոցներով ձեռքերը լավ տաքացրեց:

Համանունությունը նկատելի է նաև արևմտահայերենում ՝բերնին չափը առնել-1.արժանի պատասխան ստանալ ,2.խոսքի մեջ պարտվել,ետև կենալ-1.թաքնվել,2.պաշտպանվել:

Ժամանակակից հայերենում նրանց առաջացման հիմնական ուղին դարձվածքների բազմիմաստությունն է ,երբ բազմիմաստ դարձվածքի իմաստներից մեկը կամ մի քանիսը հեռանում են մայր դարձվածքի հիմնական իմաստից այնքան ,որ խախտվում ՝ բազմիմաստ դարձվածքի իմաստային-տրամաբանական կապը և նախկին իմաստը գիտակցվում է իբրև ինքնուրույն դարձվածք իր անկախ իմաստով:

Արևելահայրեն օրինակ՝ձեռք ընկնել-ձեռք բերել ,գտնել,ձեռքը ընկնել – բռնվել:

Արևմտահայրեն օրինակ՝ձեռքը երթալ-կամենալ,ձեռքը երթալ –կարենալ:

Պետք է նշել,որ դարձվածային միավորների մի մասը խոսքաշարում կարող է խոսքիմասային այլ պատկանելիություն ունենալ ուրիշ խոսքաշարում ունեցած պատկանելության համեմատ:

Հոմանշային կիրառություն ունեն հետևյալ համանուն դարձվածքները՝ արևել.օրինակ՝գլուխը կորցնել-1.խուճապի մատնվել,2.խելքը թռցենել:

Արևմտահայերեն օրինակ՝խելքը հասնիլ-1.ըմբռնել,2.գլուխը հասնել,գիտակցել:

Կան նաև համանուն դարձվածքներ ,որոնք իրարից միանգամայն տարբեր իմաստներ են արտահայոտում:

Արևմտահայերեն օրինակ՝ոտքերը տնկել-1.պառկել անհոգ,2.մեռնել

Արևմտահայերեն օրինակ՝խօսքը անցնիլ-1.Մեկի մասին խոսել,2.Խոսքը հարգվել: Բացի վերոնշյալ դարձվածքներից կան նաև հականիշ գործածություն ունեցող համանուն դարձվածքներ՝արևել.օրինակ՝գին չունենալ-1.անարժեք.2արժեքավոր:/Քո արած լավությունը գին չունի/

/Իզուր էր նա արտասվում,քանի որ նրա արտասուքները անխիղճ մարդկանց մոտ գին չունեն:/

Արևմտահայերեն օրինակ՝մեկ աչքով նայել-1.հավասարապես վերաբերվել ,2.արհամարհել :

Դարձվածային հոմանիշներ

Հոմանիշ են կոչվում այն դարձվածքները ,որոնք ,ձևով տարբեր լինելով,նույն կամ մոտ իմաստն են արտահայտում:

Այլ կերպ է բնութագրում Ա.Սուքիասյանը /Հոմանիշներ են կոչվում այն դարձվածքները,որոնք `1.Իմաստով նույնն են կամ մոտ,

2.իրենց կազմով չեն նույնանում,

3.նույնն են իրենց բառաքերականական բնութագրմամբ:

Թեև դարձվածային հոմանիշները ,ինչպես նաև հոմանիշ բառերը ,իմաստներով շատ մոտ են ,բայց ոչ միշտ է,որ դրանք կարող են իրար փոխարինել,քանի որ կարևոր նշանակություն ունի դարձվածքի բառային շրջապատը և ոճական ոլորտը:

Միևնույն դարձվածքը կարող է բնորոշ լինել մի ոճի համար,իսկ մյուս ոճի համար՝ոչ.օրինակ՝վախկոտությունը խորհրդանշող շատ հոմանիշ դարձվածքներ կան՝աչքը վախենալ,լեզուն թաղիք դառնալ,սիրտը բերանին կպչել,շրթունքը /պռոշ/ ճաքել:Նշված դարձվածքների մի մասը հատուկ է գրական ոճին,օրինակ՝ աչքը վախենալ,սիրտը բերանին կպչել,իսկ մյուսը մասը ՝ ժողովրդակախոսակցականին ու բարբառներին՝ շրթունքը /պռոշը ճաքել:

Համանիշ և նույնանիշ համարվող հոմանիշ դարձվածքներ

Իրենց բաղադրիչների իմաստով ու բնույթով պայմանավորված ՝հոմանիշ դարձվածքներն սովորական հոմանիշ բառերի նման լինում են նույնանիշ և հոմանիշ:Նույնանիշ են կոչվում այն դարձվածքները ,որոնք նույն կամ գրեթե նույն իմաստ են արտահայտում և կարող են փոխարինել միմյանց:

Արևելահայերեն օրինակ՝պատվին դիպչել/պատվով դուրս գալ –պատվով կատարել:

Արևմտահայերեն օրինակ՝ քիթը բրդել/քիթը իյնալ-վատ հոտին չդիմանալ:

Համանիշ են կոչվում այն դարձվածքները ,որոնք ոչ թե նույն, այլ մոտ իմաստ են արտահայտում;

Արևելահայերեն օրինակ՝խելքը շուռ գալ-խենթանալ,ցնորվել/խելքին քամի փչել –խենթանալ:

Արևմտահայերեն օրինակ՝աչքը –յոնք կտրիլ/աչքէ հանել-մեկին ուշադիր քննել:

Ուշագրավ են արևմտահայերեն և արևելայահերեն դարձվածային հոմանիշները՝շապիկը կարճ /խելքը կարճ,ասեղ կուլ տված/կաշիին մեջ հալած ,խելքը հասնի/գլուխ հանել,աչքը մազ բուսնիլ/աչքը ջուր կտրել:

Նախադասության արժեք ունեցող դարձվածքներ

Նման դարձվածքները ,որոնք հարաբերակից են նախադասություններին ,կոչվում են հաղորդակցական դարձվային հոմանիշներ :

Սրանք հանդես են գալիս ինչպես պարզ,այնպես էլ բարդ նախադասությունների տեսքով:

Արևելահայերեն օրինակ՝մի քոռ կոպեկ չարժե-ականջով մեկ մոխիր չարժե:

Արմտահայերեն օրինակ՝երկու մեռելի քովէն ,որ անցնի ,մեկը կը գողանա-շատ ճարպիկ է:

Դարձվածային հականիշներ

Դարձվածային հականշությունը հոմանշության հակառակ երևույթն է:

Հականիշ են կոչվում այն բառերը ,որոնք ունեն հակառակ բառային իմաստներ:

Արևելահայերեն օրինակներ՝ականջը ծանր/ ականջը թեթև ,աչքը անկուշտ/աչքը կուշտ,աշխարհք գալ/աշխարհը թողնել:

Արևմտահայերեն օրինակ՝աչքը գոց-միամիտ,աչքէն մազ հանող –շատ ճարպիկ,ուշքը վրան ըլլալ /ուշքը կորսցնել:

Դարձվածային տարբերակներ

Հայերենում դարձվածքների մի զգալի մասը հանդես է գալիս մեկից ավելի բառաքերականական տարատեսակներով,օրինակ՝ գետնին հավասարացնել կամ

գետնի հետ հավասար անել,գիրքն առնել կամ ընդունել,գլխին գդակ դնել/լինել կամ ունենալ:

Դարձվածային տարբերակներ պետք է համարել դարձվածքի հետևյալ տարատեսակները `գահ կամ գահին բարձրացնել,հազար մաղով կամ մաղից հաց կերած,գայթակղության քար կամ գայթակղիչ քար,սիրտ փորում մնալ կամ սիրտը փորումը մեռնել:

Դարձվածային տարբերակներ կարող են հմարվել նույն դարձվածքի արևելահայերեն և արևմտահայերեն ձևերը՝արևելահայերենում `միտքը գցել,նեղն ընկնել,արևմտահայերենում ` միտքը ձգել,նեղը իյնալ:

Արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային տարբերակներ են առաջանում գրական լեզվի այդ տարբերակների յուրհատուկ բառաքերականական ձևերով տարբերվող բաղադրիչներից կազմված դարձվածքները :Բաղադրիչների միջև առկա է բառային ,քերականական ,հնչյունական ,բայական նույն ժամանակների կազմության, բառային հոմանիշների տարբերություններ:

Քերականական տարբերակներ՝աչքով անել-աչուկ ընել,դժվարը գալ-դժվարին գալ,երեսով տալ-երեսը զարնել:

Հնչյունական տարբերակներ՝բերանն ընկնել-բերանն իյնալ,քար լինի կտրաքի-քար ըլլա՝ կը ճայթի:

Բառային տարբերակներ՝աչքը փակել-աչքը գոցել,դուրս գցել-դուրս ձգել,օձիքը ազատել/օձիքը խալսխել,լեզուն կծել-լեզուն խածնելաչքը շոռ-աչքը լոռ,ձեռքը փակ-ձեռքը հուպ:

Ինչպես արդեն նշել ենք,արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակներ են առաջանում նաև բայական նույն ժամանակների կազմության տարբերություններից կախված:

Եթե արևելահայերենում սահմանական եղանակի ներկան կազմվում է վերլուծական ձևով `արևը կծում է,ապա արևմտահայերենում `համադրական եղանակով՝ արևը կը կճէ,այսինքն՝ գրաբարյան ներկային ձևերին ավելանում է *կը* եղանակիչը:

Վերջաբան

Ուսումնասիրելով արդի հայոց լեզվի երկու գրական տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի դարձվածային միավորները ՝գալիս ենք այն եզրակացության ,որ կան թե նմանություններ,թե տարբերություններ,որոնք պայմանավորված են այն հանգամանքով ,որ 20-րդ դարի կեսերից սկսած երկու գրական լեզուներում նկատելի է դարձել արևմտահայերենի ազդեցությունը արևելահայերենի վրա,և՝ հակառակը:

Ընդհանրությունների վերաբերյալ կետերը ներկայացնում ենք հետևյալ ձևով՝

1.արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածքների առաջացման աղբյուրները

2.դարձվածքների կառուցման տիպերը

3.ըստ միաձուլության աստիճանի և ձևաիմաստային դասակարգման ՝արևելահայերենի և արևմտահայերենի դարձվածքները գրեթե չունեն տարբերություններ:

Տարբերությունները նկատելի են գրական լեզվի այդ երկու տարբերակների յուրահատուկ բառաքերական ձևերով տարբերվող բաղադրիչներից կազմված դարձվածքներում:Բաղադրիչների միջև առկա են բառային ,քերականական ,հնչյունական,բայական նույն ժամանակների կազմության ,բառային հոմանիշների տարբերություններ:

1.Քերականական տարբերությունները առաջանում են դարձվածքների բաղադրիչների քերականական ձևափոխություններից,որոնց մեջ մտնում են՝,օրինակ՝աչքով անել-աչուկ ընել,դժվարը գալ-դժվարին գալ,արյունը եռ գալ-արյունը եռալ,բարակ նայել-բարակը նայել:

Հնչյունական տարբերություններ առաջանում են արևելահայերեն նույն բաղադրիչի հնչյունափոխ և անհնչունափոխ ձևերից:

Բառային տարբերությունները կապված են դարձվածքը կազմող բաղադրիչների արևելահայերեն և արևմտահայերեն տարբերությամբ ,որոնք էլ բաժանվում են ՝ բայական՝ աչքը փակել,գոյականական՝բերանից բառերը աքցանով հանել-բերանէն խոսքը չուանով հանել ,ածականական ՝ձեռքը փակ-ձեռքը գոց:

Բայական նույն ժամանակների կազմության տարբերությունները ,օրինակ՝արևը կճում է/արևը կը կճէ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Մ. Աբեղյան ,Հայոց լեզվի տեսություն,Զ.հատոր,Երևան 1974թ.

2.Խ.Բաղիկյան,Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն,Երևան 2008թ.

3.Խ.Բաղիկյան,Ուսումնական դարձվածաբանական բառարան,Երևան,2008թ.

4.Ե.Գևորգյան,Հայերենի դարձվածքները,Երևան 1990թ.

5.Ալ.Մարգարյան ,Ժամանակակից հայոց լեզու,Երևան ,1990թ.

6.Ռ.Սաքապետոյան,Արևմտահայերենի դասագիրք,Երևան 2006թ.

7.Ա.Սուքիասյան,Ս.Գալստյան,,Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան,Երևան 1975թ.

8.Ա.Սուքիասյան ,Ժամանակակից հայոց լեզու,Երևան 2004թ.

Բովանդակություն

Ներածություն – 2 էջ

Դարձվածքը և նրա արտահայտությունը-3-4էջ

Դարձվածքի կառուցվածքային տիպերը ըստ հիմնական բաղադրիչի -5-8էջ

Դարձվածքների դասակարգումը ըստ իմաստային միաձուլության աստիճանի-9-10էջ

Դարձվածքների ձևաիմաստային դասակարգումը 11-16էջ

Վերջաբան-17էջ

Գրականության ցանկ -18էջ

.